Մեծածախ ապրանքների և պահեստավորման լոգիստիկ կենտրոնի կառուցման ներդրումային նախագիծ

Ծրագրի նկարագիրը	Ծրագրի նպատակն է Երևանում ստեղծել մեծածախ ապրանքների և պահեստավորման միջազգային լոգիստիկ կենտրոն Հյուսիս-հարավ ավտոմայրուղու հարևանությամբ՝ Արտաշատի խճուղու հարակից հատվածում: Կենտրոնը կհանդիսանա տարանցիկ ապրանքների սպասարկման մեծածախ առևտրի իրականացման և այլ լոգիստիկ ծառայությունների մատուցման կետ: Ծրագրով նախատեսվում է կառուցել՝ - ջերմաստիճանի կարգավորմամբ պահեստներ, այդ թվում՝ սառնարանային պահեստներ, - գրասենյակային տարածքներ, որոնք կտրվեն վարձակալության, - մատչելի հյուրանոց, - առևտրի և սննդի կետեր, - տեխսպասարկման կայան, - բեռնատար և մարդատար մեքենաների համար նախատեսված ավտոկայանատեղ: Տեխնոլոգիապես հագեցած այս կենտրոնն ապրանքատերերին հնարավորություն կտա նաև կազմակերպել գույքագրում, տեսակավորում, միջազգային չափանիշներին համապատասխան փաթեթավորում, փաստաթղթերի ձևակերպում և այլն:
Տեխնիկական ցուցանիշներ	Տարածքի ընդհանուր մակերեսը կկազմի շուրջ 10 հա:
Ծրագրի ժամկետներ	Շինարարության տևողությունը՝ շուրջ 3-5 տարի:
Ծրագրի արժեքը	Շինարարության արժեքը կկազմի շուրջ 15 մլն ԱՄՆ դոլար:
Ներդրումների ձևը և հիմնական պայմանները	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել մասնավոր ներդրումների ներգրավմամբ: Երևանի քաղաքապետարանը ներդրողին կաջակցի հողատարածքների իրավական կարգավիճակի մասին տեղեկատվության տրամադրման, ծրագրի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ձեռքբերման գործում:
Ներկա իրավիճակ	Առկա է հայեցակարգային նախագիծ: